ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
16 ապրիլի 2019 թվականի N 83 -Ա

«ԱՆԳԵՂԱԿՈԹԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով և 19-րդ հոդվածով, համաձայն «Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ի կանոնադրության 3-րդ մասի 18-րդ կետի 3-րդ ենթակետի՝

կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

1. Սուսաննա Հովասափյանին 2019թ. ապրիլի 17-ից ազատել «Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:

Հիմք՝ Ս. Հովասափյանի անձնական դիմումը:

2. Զարուհի Առաքելյանին 2019թ. ապրիլի 17-ից նշանակել «Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության տնօրենի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացումը: Հիմք՝ Զ.Առաքելյանի անձնական դիմումը:

3. Ընկերությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Աբգարյան Մարինե	Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Թադևոսյան Արմեն	մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
Դավթյան Նարեկ	մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ
Դավթյան Արփինե	մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ
Առաքելյան Զարուհի	«Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, ընդունող

Հովասափյան Սուսաննա «Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն, հանձնող:

4. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

16.04.2019

X

VERIFIED OCSP 16.04.2019 17:36:28 GMT+4

Подписано: BOGHOSYAN HUNAN 4005640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2019թ ապրիլի 16
ք. Կապան